«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

24.05.2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Անդրեյ Ղուկասյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Ղուկասյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում մարզպետարանների աշխատակիցների պարգևավճարների վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2019թ. առաջին եռամսյակային պարգևավճարների համար մարզպետարանի աշխատակիցներին որքա՞ն գումար է վճարվել:
2. Մարզպետարանը քանի՞ աշխատակից ունի և նրանցից քանի՞սն են ստացել պարգևավճար:
3. Ի՞նչ սկզբունքով են տրվել պարգավճարները և ինչի հիման վրա:
4. Կա՞ն աշխատակիցներ, որոնց պարգևավճարներ չեն տրվել: Եթե այո, ապա քանի՞ աշխատակցի չի հատկացվել, ովքեր են նրանք և ինչո՞ւ չի հատկացվել:
5. Տրամադրել նշված ժամանակահատվածում մարզպետի, մարզպետի տեղակալի(ների), վերջինիս օգնականի, մարզպետի օգնականների, խորհրդականների, աշխատակազմի քարտուղարի, վարչության պետերի պարգևավճարների չափի վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով ստացողների տվյալները, գումարի չափը, գործակիցը, զբաղեցրած պաշտոնը:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան